բեմաղթեցին։ Որոց 'ի պատասխանի Նորին Ս. Օծութիւնն ևս բարեհաճեցաւ յայտնել զիւր շնորհակալիս և շնորհել զսուրբ օրհնութիւնն։

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄԻՔԱՅԷԼ ԳԷՈՐԳԵԱՆ ԹԱՄԱՄՇԵԱՆՑ ԵՒ

ՆՈՒԷՐՆԵՐ

Ընդուսական և Մեծապատիւ Միքայէլ Գէորգեան Թամամշեանց՝ յարևշտութիւն նորաձաղիկ որդւոց իւրոց և 'ի յիշատակ հանդուցեալ Խարեպաշտ Հ. Օրն՝ նուիրեց ձուլածոյ և գեղեցկաձև վանդակներ ամենայն պարագայիւք վասն միջին և երկուց կողմանց դասուց Ս. Տաճարիս Էջմիածնի։

Խարեպաշտ նուիրատուին գեղեցիկ և բարենախանձ զգացմամբք ընձայած նուէրները հռչակելով 'ի լուր Ազգայնոց մերոց սիրելեաց՝ միջոցաւ ամենազրոյս, միանգամայն կը փութամք հրապարակաւ մատուցանել մեր խորին շնորհակալեաց և երախտագիտութեանց հաւաստիքը և բարեմաղթել 'ի Տեառնէ, որպէս զի 'ի հաճոյս իւր ընկալեալ զուխտս Նորին՝ տացէ Տէր շնորհօք իւրով և ողորմութեամբ՝ արևշատութիւն որդւոց Նորին, զարգանալ և փայլել յամենայն բարեմասնութիւնս հոգւոյ և մարմնոյ՝ յօգուտ և 'ի պարծանս Հայ Ազգիս և Ս. Եկեղեցւոյս ևս 'ի մխիթարութիւն սրտից ծնողացն։ Լուսաւորեսցէ Տէր և զհոգի հանգուցեալ Հ. Օրն բարեպաշտի, և արժանացուսցէ վայելից յաւիտենական կենաց և փառաց։

"Երանի՜ որ ունիցի յիշատակ 'ի Սիօն"։

Նմանապէս Տփխիսայ Կաթուղիկէ Ս. Աստուածածնին և Մողնւոյ Ս. Գէորգ Եկեղեցեաց արդեամբք՝ եօթն կանգուն բարձրութեամբ և տասն լայնութեամբ մի զոյգ կերպասեայ և ծաղկաւոր վարագոյր՝ նուիրուած է վասն Ս. Աստուածածնի և Ս. Յովհաննու Մկրտչի խորանաց Ս. Տաճարիս Էջմիածնի՝ 'ի ձեռն Գեր. Մակար Ս. Բրք Եպիսկոպոսի։

Մայր Աթոռոյս հարազատ և անձնանուէր որդիքը մինչ կընթեռնուն այս տողերը, արդարև մեք անշուշտ եմք, զի նոքա ոգեւորուած և վառուած 'ի սէր Ս. Աթոռոյս և Ազգիս, և միանգամայն իրրև հարազատ սերունդ և զաւակներ Ազգաշէն և Եկեղեցաշէն երանելի նախնեաց մերոց՝ պիտի նախանձին և փութան այսպիսի նուէրներ ընծայել Մայր Աթոռոյ մերում, թէ վասն Ս. Տաճարիս, թէ վասն նորակառոյց Ուսումնարանիս և թէ Տպարանիս։ Եւ այսպէս 'ի հարկէ՝ ամենայն ազգային անհատ ըստ իւրումն կարողութեան և ձեռնհասութեան կատարելով իւրեանց պարտաւորութիւնքը ըստ ամենայնի օգնելով և առատօրէն նպաստելով Մայր Աթոռոյս, առաւել ևս կը խրախուսէ և կ'ոգևորէ Նորին անձնանուէր և ազգասէր Գլուխը և զմեզ զմիաբանութիւնս։

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ.

(Շարունակութիւն)

ՑԵՐԵՒԱՆ ԵՒ ԻՎԻՃԱԿՍ։

	ռուբլի
Ղահրաման Մելիք – Աղամալեանց . . .	50
Արսէն Սուլթան Գեղամեանց	40
Վարդան Խուդաբաշխեանց	40